Արձանագրություն N 2

Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղու՝ Թբիլիսյան նրբանցքի հատվածում և Հասրաթյան փողոցի՝ Սիլիկյան հին խճուղու հատման հատվածում վերգետնյա հետիոտն անցումների կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

19.01.2017թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Է. Շաքարյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մատասյան / գնահատող /, Ս. Գևորգյան / գնահատող /
Վ. Գուլգուլյան / բացող /, Բ. Տեր-Թովմասյան / բացող /,

1. Տեղեկություններ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Է. Շաքարյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2017 թվականի հունվարի 19-ին, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	«Սարգիս Մարիաննա» ՍՊԸ
2	«Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ
3	«Երևաննախագիծ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Է. Շաքարյան)

3.1 Բաց ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղու՝ Թբիլիսյան նրբանցքի հատվածում վերգետնյա հետիոտն անցումի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ		
Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը

		Ինքնարժեք	Շահույթ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
«Սարգիս Մարիաննա» ՍՊԸ	3 000 000	1150000	115000	1265000		1265000
«Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ		1887000	100000	1987000		1987000
«Երևաննախագիծ» ՓԲԸ		1893939	189394	2083333	416667	2500000

Երևան քաղաքի Հասրաթյան փողոցի՝ Սիլիկյան հին խճուղու հատման հատվածում վերգետնյա հետիոտն անցումի կառուցման նախագծա–նախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքներ

Մասնակցի անվանումը	Նախահաշվային գինը	Առաջարկած գինը				
		Ինքնարժեք	Շահույթ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
«Սարգիս Մարիաննա» ՍՊԸ	3 000 000	1125000	110000	1235000		1235000
«Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ		1847000	100000	1947000		1947000
«Երևաննախագիծ» ՓԲԸ		1893939	189394	2083333	416667	2500000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Է. Շաքարյան)

4.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի.

-«Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնությանը կից պահանջագրում նշված հայտի ապահովման գումարի չափը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ պակաս է երկու տոկոսից: Մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է:

4.2 Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերը էլեկտրոնային համակարգի միջոցով գնահատվել են հետևյալ կերպ.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սարգիս Մարիաննա» ՍՊԸ	Բավարար
«Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ	Բավարար
«Երևաննախագիծ» ՓԲԸ	Անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Բաց ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցների մասին

(Է. Շաքարյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/26» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սարգիս Մարիաննա» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, 2-րդ տեղ՝ «Վի Ընդ Վի Փրոջեքթ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Է. Շաքարյան)

6.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 20.01.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

6.2 20.01.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ կներկայացվի հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

7. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Է. Շաքարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 26.01.2017թ. ժամը 14:40-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Է. Շաքարյան

Անդամներ՝ ---------- Վ. Գուլգուլյան

---------- Բ. Տեր-Թովմասյան

---------- Ե. Մատասյան

---------- Ս. Գևորգյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան